

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 53/1

7 դեկտեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 20.11.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Անուշ Շահինյանի 07.11.2012թ. դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գավառի ՏՀՏ 07.09.2012թ. թիվ 2118452 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Գավառի ՏՀՏ պետի 07.09.2012թ. թիվ 2118452 հանձնարարագրի, ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Անուշ Շահինյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 07.09.2012թ-ին կազմվել է թիվ 2118452 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Անուշ Շահինյանին պատկանող ք.Գավառ, Ազատության 9 հասցեում գործող լավաշ հացի արտադրամասը 15.08.2012թ-ից մինչև 30.08.2012թ. իրացրել է 120000 դրամի լավաշ հաց, սակայն չունի ներդրված հսկիչ-դրամարկղային մեքենա: Կից ներկայացվում է Ա/Ձ Անուշ Շահինյանի գրավոր հայտարարությունը:

Ա/Ձ Անուշ Շահինյանի կողմից խախտվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, հոդվածի 1-ին մասի պահանջները՝ «տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մանրածախ վաճառք իրականացնելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է:

Արդյունքում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 300.000 դրամի չափով:

Ա/Ձ Անուշ Շահինյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ս.թ. օգոստոսի 30-ին իմ բացակայության պայմաններում Գավառի ՏՀՏ աշխատակիցները հսկողության բաժնի պետի հետ միասին ներկայացել են ստուգման և կարծելով, որ գործունեությունն անօրինական է, պահանջել են գործունեության իրավունքի փաստաթուղթ: Իմ բացակայության ընթացքում նրանք կազմել են արձանագրություն, որն ինձ չի ներկայացվել:

Ես այցելեցի Գավառի ՏՀՏ և հսկողության բաժնի պետից պահանջեցի ստուգման հանձնարարագիրը, սակայն նա հանձնարարագիր չունեւ: Որևէ անօրինականություն բացահայտելու համար բաժնի պետը տարբեր բնույթի հարցեր է տվել: Վերջինս սխալ տեղեկատվությամբ համոզել է, որ ձեռք բերված հսկիչ-դրամարկղային մեքենան գործածական չէ, և որ նոր գործող կարգի համաձայն միայն նոր տիպի մեքենաներն են հաշվառվում: Այս պարագայում ես տվեցի հայտարարություն, որ նոր մեքենա ձեռք չեմ բերել համապատասխան ֆինանս չունենալու պատճառով: Հայտարարությունը գրելուց հետո բաժնի պետն առանց հանձնարարագրի իրականացված ստուգումը ներկայացրեց օրինական պատճառաբանելով, որ ՀԴՄ-ի ստուգումների ժամանակ հանձնարարագիրը ներկայացվում է հետո:

Ստուգման հաջորդ օրը՝ օգոստոսի 31-ին, իմ կողմից գրված հայտարարությունը ձեռք բերելուց հետո ինձ ուղարկվել է նախորդ օրը չներկայացված հանձնարարագիրը, ինչպես նաև ՀԴՄ չունենալու փաստով ակտի նախագիծ՝ 300.000 դրամ տուգանելու մասին: Տեղի ունեցածի հետ համաձայն չլինելու պատճառով ստուգման ակտի նախագիծը և ակտն իր կողմից չեն ստորագրվել:

Դիմումատուն խնդրում է հաշվի առնել այն հանգամանքը, որ ստուգումն իրականացվել է առանց հանձնարարագրի ներկայացման, այսինքն՝ խախտվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Ստուգման նպատակը ձևավորվել է ստուգման պրոցեսում, իսկ ստուգում իրականացնող գլխավոր անձը (բաժնի պետը) ընդգրկված չէ հանձնարարագրում և ստուգման ակտում:

Դիմումատուն խնդրում է հաշվի առնել նաև, որ իր սկսած մանր բիզնեսը կազմավորման փուլում էր և իրացման հնարավորությունը փորձել է ստուգել շուկայի փոփոխվող պահանջներով, խաղի կանոններին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից դիմումատուն խնդրում է ստուգման ակտը համարել չեղյալ և հնարավորություն ընձեռել գործը շարունակելու համար:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Անուշ Շահինյանի և ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Գավառի ՏՀՏ պետի 07.09.2012թ. թիվ 2118452 հանձնարարագրի, վերջինումն ընդգրկված պաշտոնատար անձինք 30.08.2012թ-ին այցելել են Ա/Ձ Անուշ Շահինյանին պատկանող ք.Գավառ, Ագատության 9 հասցեում գործող լավաշ հացի արտադրամաս: Նույն օրը՝ 30.08.2012թ-ին, Ա/Ձ Անուշ Շահինյանը տվել է գրավոր հայտարարություն, որում մասնավորապես նշել է, որ 15.08.2012թ-ից մինչև 30.08.2012թ. ընկած ժամանակահատվածում տեղից իրացրել է 120000 դրամի լավաշ հաց, սակայն առայժմ ձեռք չի բերել հսկիչ-դրամարկղային մեքենա:

Ա/Ձ Անուշ Շահինյանին Հանձնաժողովի անդամների ուղղված հարցին, թե ընդունում է արդյոք վերջինս, որ առանց հսկիչ-դրամարկղային մեքենայի իրականացրել է լավաշ հացի մանրածախ վաճառք, հնչեց պատասխան, որ ինքն ընդունում է այդ հանգամանքը: Միևնույն ժամանակ Ա/Ձ Անուշ Շահինյանն ավելացրեց, որ վաճառքը կրել է գուտ փորձնական բնույթ:

Ա/Ձ Անուշ Շահինյանի այն պնդման վերաբերյալ, որ ստուգման իրականացվել է առանց հանձնարարագրի ներկայացման, նշվեց, որ այն չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, « ԿԱ ՊԵԿ Գավառի ՏՀՏ պետի 07.09.2012թ. թիվ 2118452 հանձնարարագրի ուսումնասիրությամբ պարզվեց, որ այն ստուգման օրը՝ 30.08.2012թ-ին, ներկայացվել է Ա/Ձ Անուշ Շահինյանին, ինչի մասին է վկայում վերջինիս կողմից հանձնարարագրի դարձերեսին դրված ստորագրությունը:

Ինչ վերաբերում է Ա/Ձ Անուշ Շահինյանի այն պնդմանը, որ Գավառի ՏՀՏ հսկողության բաժնի պետը հանձնարարագրում ընդգրկված չլինելով հանդերձ մասնակցել է ստուգմանը, ապա այն նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ չնայած նրան, որ բաժնի պետը, որպես ստուգման իրականացնող անձանց ղեկավար, այցելել է Ա/Ձ Անուշ Շահինյանի գործունեության իրականացման վայր, սակայն որևէ ստուգողական գործողություն չի իրականացրել:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Անուշ Շահինյանի կողմից խախտվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ղ ո շ ու մ է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն-իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ